



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



ԼԱՍ ՎԵԿԱՍԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵՂԵՐՈՆԻ ՍՐԱՅԻ  
ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՒ ՄԱՏՈՒՑՈՒՄԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

### ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԸԼԼԱՅ ՍՐԲԻՉԸ, ՄԱՔՐԻՉԸ ԵՒ ՈՒՂՂԻՉԸ ԱՅՍ ԳԱՂՈՒԹԻ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ

*ՊԱՏԳԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ*

- **ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԼԽԱՒՈՐ ԲԱՐԵՐԱՐ ԼԵՐԻ ՊԱՐՆԸ  
ՊԱՐԳԵՄԱՏՐՈՒԹՅԱՒ «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ»Ի ՇՔԱՆՇԱՆՈՎ**
- **ԱՒԵԼԻ ԲԱՆ 100.000 ՏՈԼԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅԱՒ Ի ՆՊԱՍՏ ԼԱՍ  
ՎԵԿԱՍԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ**

Շաբաթ, 22 եւ Կիրակի, 23 Մայիս 2010-ին, Նեւատա նահանգի Լաս Վեկասի հայ համայնքը ապրեցաւ յուզումնախառն ու պատմական օրեր, վկայ դառնալով սեփական կալուածի վրայ մշակութային կեդրոնի բացման արարողութեան եւ մօտիկ ապագային կառուցուելիք Ս. Կարապետ Եկեղեցւոյ ծրագրային աշխատանքին ու վայելելով Համազգայինի »ԱՆԻ« պարախումբին ելոյթը:

### ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԱՆԻ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻՆ ԵԼՈՅԹԸ

Շաբաթ, 22 Մայիս երեկոյեան, կազմակերպութեամբ ծխական յանձնախումբին եւ գործակցութեամբ Համազգայինի Շրջանային Վարչութեան, Լաս Վեկասի Պետական Համալսարանի սրահին մէջ տեղի ունեցաւ պարային ելոյթ, կատարողութեամբ Համազգայինի »ԱՆԻ« պարախումբին: Հիւրաբար նաեւ ելոյթ ունեցաւ Լաս Վեկասի Յոյն համայնքի պատանեաց պարախումբը, ներկայացնելով յունական ժողովրդական պարեր:

Ելոյթը կը վայելէր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի: Ներկայ էին

Նաեւ Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի գլխաւոր հիւպատոսը՝ Տիար Գրիգոր Յովհաննիսեան, Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան, Ազգ. Վարչութեան նախկին ատենապետ Տիար Կարօ Յակոբեան, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւներ՝ Պատ. Ներսէս Քոփալեան եւ Պատ. Սեմ Ակիւլեան, Յոյն եւ Մարոնիթ համայնքներու հոգեւոր հայրեր եւ պատուոյ հիւրեր: Սրահը ամբողջութեամբ լեցուցած էին շուրջ հինգ հարիւր յիսուն մշակութասէր հանդիսատեսներ:

Ողջոյնի եւ բարի գալուստի խօսք արտասանեց Ս. Կարապետ Եկեղեցւոյ ծխական յանձնախումբի ատենապետը՝ Տիար Ատրուշան Արմենեան:

Խումբի անդամ-անդամուհիները, մերթ հեզաճկուն եւ մերթ առնական խորխտ պարերով, գերեցին ներկաներուն սիրտերը, հայկական հպարտութիւն ու հոգեւոր ցնծութիւն առթելով ներկաներու հոգիներուն մէջ:

Առաջնորդ Սրբազանը իր գնահատանքի խօսքին մէջ մշտանորոգ կենսունակութիւն մաղթեց գաղութին ու պարխումբին:

«ԱՆԻ» պարախումբը - ըսաւ Սրբազան Հայրը -, իր կազմութեան առաջին օրէն սկսեալ, եղած է Համազգայինի մշակութային առաքելութիւնը տարածող յառաջապահ մը: Իրենց առաքելութեամբ իսկ, «Անի»ի ղեկավարները յանձն առած են ազնիւ մարտահրաւեր մը՝ պահպանել հայկական պարային արուեստն ու զայն զարգացնելով, իբրեւ աւանդ փոխանցել նորահաս սերունդներուն: Անոր ելոյթները հանդիսատեսը կը փոխադրեն հայկական ժողովրդական ու տոհմիկ արուեստի, ինչո՞ւ չէ նաեւ ոչ հայկական պարերու ոլորտները, զանոնք կը համակեն մշակոյթի այս կալուածին առթած հրայրքով: Եւ ահա, պարախումբին 35ամեակին առիթով կազմակերպուած շրջապտոյտին ծիրին մէջ, անոր հայութեամբ ու արուեստով համակող ներկայութիւնը կու գայ ջերմացնելու նաեւ Լաս Վեկասի մեր ժողովուրդը:

«Թող օրինեալ ըլլայ վաստակը «Անի» պարախումբի հիմնադիր-ղեկավարներուն՝ Եղիա Հաշօլեանի ու Սիւզի Դարբինեանի, նախկին ու այժմու վարչականներուն ու անոնց կողքին ծառայող նուիրեալներուն: Թող բարձրեալն Աստուած իր շնորհաբաշխ Ս. Աջը հովանի պահէ Լաս Վեկասի մեր ժողովուրդին ու այս ելոյթի կազմակերպիչներուն վրայ, որոնք ամուր կը պահեն մեր արմատներուն հետ բոլոր կամուրջները», եզրափակեց ան:

## **ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄ ԵՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ**

Կիրակի, 23 Մայիսի առաւօտեան ժամը 11-ին խանդավառութիւն կը տիրէր Տեզըրթ Ին պողոտային վրայ: Եկեղեցւոյ մուտքին, Հ.Մ.Ը.Մ.ի Լաս Վեկասի «Արցախ» Մասնաճիւղի սկաւտները ժպիտով կը դիմաւորէին գաղութի անդամները: Առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ, եւ ի ներկայութեան Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի գլխաւոր հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեանի, Հոգ. Տ. Պարթեւ Վրդ.

Կիլիմեանի, Ազգ. Վարչութեան նախկին ատենապետ Տիար Կարօ Յակոբեանի, ծխական յանձնախումբի ատենապետ Տիար Ատրուշան Արմենեանի եւ յանձնախումբի միւս անդամներուն, ինչպէս նաեւ գաղութի քոյր կազմակերպութեանց ներկայացուցիչներու, մեր Թեմի Երիտասարդաց Միութեան ներկայացուցիչներու եւ հաւատացեալներու, կատարուեցաւ Լաւ Վեկասի Ս. Կարապետ եկեղեցւոյ եւ Հայ Մշակութային Կեդրոնին ու յատկապէս սրահին բացման արարողութիւնը:

Այս առթիւ իր արտասանած օրհնութեան խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը ըսաւ. «Սրտի անհուն գոհունակութեամբ կ'ողջունենք Լաւ Վեկասի Հայց. Առաքելական մեր եկեղեցւոյ ծխական յանձնախումբն ու համայնքի գաւակները եւ կը խնդակցինք բոլորիդ՝ Ս. Կարապետ եկեղեցւոյ եւ Հայ Մշակութային Կեդրոնին ու յատկապէս սրահին բացման առիթով: 23 Մայիսը պատմական օր մըն է Լաւ Վեկասի մեր համայնքին համար: Այսօր, պաշտօնապէս բացումը կը կատարենք սրահի մը, որ առժամաբար պիտի ըլլայ աղօթավայր, մինչեւ Ս. Կարապետ եկեղեցւոյ շինարարական աշխատանքներուն աւարտը: Այս համալիրը, սիրելիներ, պիտի ըլլայ եկեղեցի ու մշակոյթի կեդրոն, մէկ խօսքով՝ մեր ժողովուրդին համար հոգեւոր ու հոգեկան կարիքներու բաւարարման տուն»:

Սրահին բացման առիթով, Գնահատագիր մը փոխանցեց Ծերակուտական Տիար Հէրի Ռիտի ներկայացուցիչը:

Բացման արարողութենէն ետք եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. եւ անմահ պատարագ մատոյց Առաջնորդ Սրբազան Հայրը: Սուրբ խորանին կը սպասարկէին Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան եւ Լոս Անճելըսէն ժամանած երիտասարդ սարկաւազները: Երգեցողութիւնը կատարեցին համայնքի դպրաց դասը եւ Առաջնորդարանիս «Լուսաւորիչ» երիտասարդաց երգչախումբի անդաները, ղեկավարութեամբ Բրշ. Չօհրապ Սրկ. Եարալեանի: Աղօթակից էին Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւներ՝ Պատ. Ներսէս Քոփալեան եւ Պատ. Սեմ Ակիլեան: Ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի գլխաւոր հիւպատոսը, եկեղեցւոյ եւ կալուածի բարերարը՝ Տիար Լէրի Պարնզ, Ազգ. Վարչութեան նախկին ատենապետը, ծխական յանձնախումբի անդամները, գաղութի քոյր կազմակերպութեանց ներկայացուցիչները եւ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

Իր քարոզէն առաջ, Առաջնորդ Սրբազանը օժեց առժամեայ խորանին վրայ դրուած վեմքարը:

Իր պատգամին սկիզբը, Առաջնորդ Սրբազանը նախ փառք եւ գոհութիւն տուաւ Ամենակալին Աստուծոյ, որ իր շնորհաբաշխ Ս. Աջը երկարեց եւ արժանի համարեց, որ այս գաղութն ալ ունենայ զինք պաշտելու սեփական Տուն՝ Եկեղեցի, ինչպէս նաեւ անոր կողքին՝ մշակութային կեդրոն: Ապա, Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց ու բարձր գնահատեց գլխաւոր բարերար Լէրի Պարնզը, իր այս նուիրաբերումին համար, գնահատեց Լաւ Վեկասի եկեղեցւոյ Ծխական Յանձնախումբը, անոր ատենապետ Տիար Ատրուշան Արմենեանն ու անոր գործակիցները, որոնք անդուլ աշխատանքով իրականացուցին այս պատմական քայլը, նաեւ բոլոր այն ազգայինները՝ որոնք նիւթապէս ու

բարոյապէս զօրավիզ կանգնեցան այս ծրագրի իրականացման: «Այս իրագործումը ցուցանիշ մը կը հանդիսանայ Լաս Վեկասի հայկական գաղութին ու ընդհանրապէս մեր Թեմի կենսունակութեան, ծառայական դաշտի ընդարձակման» անելցուց Առաջնորդ Սրբազան Յայրը:

Հայ Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, այդ օր Սուրբ Հոգւոյ Գալստեան՝ Պենտեկոստէի տօնն էր: Առաջնորդ Սրբազան Յայրը նախ տօնին պատմականը կատարեց, թէ ինչպէս մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի երկինք համբարձումէն տասը օրեր ետք, եւ իր խոստումին համաձայն՝ Աստուծոյ Հոգին կրակէ լեզուներով երկինքէն իջաւ ու հանգչեցաւ առաքելներուն եւ հաւատացեալներուն վրայ, սրբեց ու մաքրեց զանոնք եւ առաջնորդեց աշխարհի բոլոր անկիւնները՝ քարոզելու Տիրոջ բերած փրկութեան Աւետարանը: Առաջնորդ Սրբազանը շեշտեց, թէ Սուրբ Հոգին միայն Վերնատան մէջ հաւաքուածներուն համար տրուած խոստում մը չէր, այլ նաեւ՝ մեր բոլորին համար, ուստի՝ կոչ ուղղեց ներկաներուն լեցուելու եւ առաջնորդուելու Աստուծոյ Հոգիով. «Սուրբ Հոգին ըլլայ սրբիչը, մաքրիչը եւ ուղղիչը այս գաղութի ծառայութեան եւ առաքելութեան: Եւ ինչպէս որ քիչ առաջ վէմ քարի օծումը կատարեցինք, աղօթենք, որ Աստուած մեզ օր մըն ալ արժանացնէ օծումը կատարելու մեր նորակառոյց Ս. Կարապետ Եկեղեցւոյ», եզրակացուց Առաջնորդ Սրբազան Յայրը:

Յաւարտ Ս. եւ անմահ պատարագին, Առաջնորդ Սրբազանը եւ Եկեղեցւոյ բարերարը կատարեցին մուտքի յուշատախտակի բացումը: Առաջնորդ Սրբազան Յայրը դրուատիքով խօսեցաւ լաս-վեկասաբնակ Տիար Լէրի Պարնզի մասին, որ ի յիշատակ իր հանգուցեալ կնոջ՝ Սեդա Տէր Կարապետեան-Պարնզի, 400,000 (չորս հարիւր հազար) տոլարի իշխանական նուիրատուութեամբ մը գաղութին երազը իրականութեան վերածեց եւ նպաստեց այս կալուածին ձեռքբերման:

Աւարտին բոլոր ներկաները միասին երգեցին Հայաստանի քայլերգը, «Կիլիկիա» ու «Ի վեհ բարձանց» մաղթերգները:

## **ՍԻՐՈՅ ԾԱՇ ԵՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ**

Պաշտօնական արարողութիւններէն ու Ս. Պատարագէն ետք, կազմակերպութեամբ ծխական յանձնախումբին եւ Եկեղեցասէր տիկնանց միութեան, Եկեղեցւոյ մօտակայ Լաս Վեկասի National Golf Club-ի մէջ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ:

Ողջոյնի եւ բարի գալուստի խօսքեր արտասանեցին յաջորդաբար ծխական յանձնախումբի ատենապետը՝ Տիար Ատրուշան Արմէնեան, Ազգ. Վարչութեան նախկին ատենապետ Տիար Կարօ Յակոբեան եւ Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի գլխաւոր հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեան: Ապա կտրուեցաւ կարկանդակը, որմէ ետք Ազգ. Առաջնորդարանի «Լուսաւորիչ» երիտասարդական երգչախումբի անդամները քանի մը երգերով ծաղկեցուցին մթնոլորտը:

Առաջնորդ Սրբազանը իր պատգամին մէջ անգամ մը եւս շնորհաւորեց Լաս Վեկասի ծխական համայնքը, դրուատեց Եկեղեցւոյ գլխաւոր բարերարը, ընդգծելով, որ ան խօսքէ անելի գործի՝ մարդ է, անդրադարձաւ անոր հանգուցեալ կնոջ՝ Սեդա Տէր Կարապետեան-Պարնզի

ու Տեր Կարապետեան ընտանիքի ծառայական կեանքին: Սեդա Տեր Կարապետեան-Պարնզ դուստրն Էր Յեղասպանութենէն փրկուած ծնողներու, որոնք բռնի հեռացուած էին Վանէն, պատմական ոճիրին զոհ տուած Էր երկու եղբայրներ: Ան հասակ առած Էր հայաշունչ ընտանիքի մը յարկին տակ, կամուրջ մը դառնալով հայկական աւանդներուն ու մեր եկեղեցւոյ հաւատքին փոխանցման, ապա նաեւ իր իմացական կեանքին ընթացքին, մեծ ծառայութիւն մատուցած Էր մեր եկեղեցւոյ ու հայ համայնքին, իսկ վերջին տասնամեակներուն՝ յատկապէս Լաս Վեկասի մեր համայնքին, նպատակ դարձնելով նմաններուն օգտակար հանդիսանալը: Ի յարգանս եւ ի յիշատակ իր հանգուցեալ կնոջ ու Տեր Կարապետեան ընտանիքի հանգուցեալներուն, բարերարին փափաքով, ու խորհրդակցաբար Ազգային Վարչութեան ու Ծխական Յանձնախումբին հետ, որոշուեցաւ համալիրը կոչել Ս. Կարապետ Յայց. Առաքելական եկեղեցի ու Մշակութային կեդրոն:

Առաջնորդ Սրբազան Յայրը ուրախութեամբ յայտնեց, թէ ընդառաջելով իր ու Ազգային Վարչութեան խնդրանքին, Վեհափառ Յայրապետը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը, առ ի գնահատանք եկեղեցւոյ բարերարին իշխանական նուիրատուութեան, անոր կը շնորհէ «Կիլիկեան Ասպետ»ի շքանշանը: Առաջնորդ Սրբազանը բեմ հրաւիրեց Տիար Լէրի Պարնզը եւ շքանշանով զարդարեց անոր լամբակը՝ կուրծքը: Մեծարեալը, իր կարգին խօսք առնելով, շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Յայրապետին, իրեն շնորհած այս մեծ պատիւին ու կոչումին համար, նաեւ՝ Առաջնորդ Սրբազան Յօր եւ զաղութի անդամներուն, իրեն հանդէպ ցուցաբերուած յարգանքին ու սիրոյն համար:

Սիրոյ ճաշը խանդավառութիւն ստեղծեց նաեւ այլ երեսով. ւաւելի քան հարիւր հազարի նուիրատուութիւն հաւաքուեցաւ ի նպաստ Ս. Կարապետ եկեղեցւոյ շինարարական ֆոնտին:

*(Լաս Վեկասի Ս. Կարապետ եկեղեցւոյ հասցէն է 2054 E. Desert Inn, Las Vegas, NV 89169: Յաւելեալ տեղեկութեանց եւ եկեղեցւոյ յառաջիկայ ձեռնարկներուն համար կարելի է կապ հաստատել ծխական յանձնախումբի ատենապետ՝ Տիար Ատրուշան Արմէնեանի հետ, հեռաձայնելով 702-580-0807 թիւին, կամ գրելով [St.GarabedChurch@cox.net](mailto:St.GarabedChurch@cox.net) հասցէին):*

## **PRELATE INAUGURATES CULTURAL CENTER HALL OF ST. GARABED CHURCH OF LAS VEGAS**

- GRAND BENEFACTOR MR. LARRY BARNES AWARDED THE  
"KNIGHT OF CILICIA" MEDAL

- OVER \$100,000 RAISED FOR THE CHURCH CONSTRUCTION FUND

The weekend of May 21<sup>st</sup>, 2010, was a memorable one for the Las Vegas parish as H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, joined the community to inaugurate the new St. Garabed Church Cultural Center.

## **HAMAZKAYIN "ANI" DANCE PERFORMANCE**

The festivities began on Saturday evening with a sold-out performance by the Hamazkayin "ANI" Dance Company, attended by the Prelate, Consul General of Armenia the Honorable Grigor Hovhannisyan, Very Rev. Fr. Barthev Gulumian, former Executive Council Chair Dr. Garo Agopian, Ministers of the local Armenian Evangelical Church Rev. Nerses Kopaljian and Rev. Sam Aguilian, priests from the Greek and Maronite Churches, and 550 guests. The evening also featured a guest performance by the Greek youth dance group who presented traditional Greek dances.

Welcoming remarks were delivered by St. Garabed Church Parish Council Chair Mr. Adroushan Armenian. In his message the Prelate lauded , "ANI" Dance Company for their part in promoting our rich culture and heritage. "Through each and every performance, "ANI" Dance Company is not just presenting our traditional dances to our community, but also celebrating our national identity and ensuring that the customs and traditions passed on through the centuries are upheld by each subsequent generation. May God bless the founders of "ANI" Dance Company Yeghia Hasholian and Suzy Barseghian-Tarpinian, leading them to even greater successes in the coming years. May God bless also the board members, volunteers, and event organizers for granting the Las Vegas community the opportunity to enjoy this memorable performance", concluded the Prelate.

## **INAUGURATION AND DIVINE LITURGY**

On Sunday morning, the community gathered at the new complex for the inauguration of the Cultural Center, and specifically the opening of the hall, which was conducted by the Prelate. Among those in attendance were Consul General Grigor Hovhannisyan, Very Rev. Fr. Barthev Gulumian, Mr. Agopian, Mr. Armenian, members of sister organizations, members of the Prelacy Youth Groups, and parishioners, who were greeted by scouts from the Homenetmen "Artsakh" Chapter upon their arrival.

"With spiritual joy I greet the Las Vegas Parish Council and faithful on this momentous day as we inaugurate the St. Garabed Church Cultural Center and conduct the official opening of the hall which will serve as the sanctuary until the construction of St. Garabed Church. This complex belongs to all of you; it will become a second home and serve as the spiritual and cultural center of all the members of our Las Vegas community. Let us, therefore, build this church and center together, with the collaboration and support of each and every one of you, so that when the day comes we can proudly announce that this dream became a reality through the united efforts of all", said the Prelate on this occasion. A representative from the office of Senate Majority Leader

Harry Reid presented the community with a certificate of commendation on this occasion.

The inauguration was followed by Divine Liturgy celebrated in the hall by the Prelate, who also consecrated the marble stone (vemkar) placed on the temporary altar. Very Rev. Fr. Barthev Gulumian assisted at the altar, and members of the Prelacy "Lousavorich" youth choir joined the parish choir for the singing of the Liturgy, which was led by Deacon Zohrab Yaralian.

Prior to his sermon the Prelate first gave thanks to Almighty God for the blessed and momentous day, then took a moment to commend all those involved in the church project including benefactor Mr. Larry Barnes for his generosity, parish council Chair Adroushan Armenian and members for their diligence, and all the supporters and friends who came together and pooled their resources for the realization of the endeavor.

Reflecting on the Feast of Pentecost, which was celebrated on that day, His Eminence first gave a brief account of the events which occurred on that day two thousand years ago, when ten days after the Ascension of our Lord Jesus Christ, one hundred and twenty people had gathered to pray in a room in Jerusalem, when suddenly there was the fierce sound of violent wind and a fire that separated into one hundred and twenty individual tongues or flames which came to rest on each of their heads. Those who had gathered there received power, they were filled with the source of the greatest power in the universe, they were filled with God Himself. Addressing the faithful he said, "the gift of the Holy Spirit was not just for those gathered in the room or the crowds who assembled outside. The gift of the Holy Spirit is for all of us who love our Lord and Savior Jesus Christ. On this joyous and spiritually uplifting day, let us be filled with the Holy Spirit, praying for its might and power to embolden, empower, and invigorate us. May the Holy Spirit reinforce us in our faith and service, and arm us with the spiritual and physical strength to reach our crowning point, the construction of St. Garabed Church", concluded the Prelate.

The unveiling of the sign at the main entrance followed the service, during which the Prelate once again applauded benefactor Mr. Barnes for his generous donation made in memory of his wife Seda Der Garabedian-Barnes.

The ceremony concluded with the singing of the Armenian, Cilician, and Pontifical anthems.

## **RECEPTION**

The Parish Council had organized a reception in honor of the Prelate and Consul General, which took place in the afternoon at the Las Vegas National Golf Club.

Remarks were delivered by Mr. Armenian, the Consul General, and Mr. Agopian, followed by the cutting of the cake and a performance by the "Lousavorich" youth choir.

The Prelate then once again commended Mr. Barnes for his generous donation of \$400,000 in memory of his wife Seda Der Garabedian-Barnes, and reflected on the lives of the Der Garabedian family. The daughter of Genocide

survivors from the city of Van, Seda Der Garabedian-Barnes lost two brothers in the Genocide before the family was able to flee. Throughout their lives they remained faithful parishioners and servants of the Armenian Apostolic Church, thus the Executive Council and Parish Council saw fit that the new church and center be named St. Garabed Church and Cultural Center in tribute to their memory.

He then announced that in recognition of Mr. Barnes' benevolence, H.H. Catholicos Aram I was awarding him with the "Knight of Cilicia" medal, and invited him up to present him with the honor. Mr. Barnes expressed his thanks for the great honor and for the love and respect he has received from the community.

Donations were made throughout the reception to assist in the building of the church, and by the end of the evening over \$100,000 was raised for the project.

(St. Garabed Church and Cultural Center of Las Vegas is located at 2054 E. Desert Inn, Las Vegas, NV 89169. For further information on the church and future activities, please contact Parish Council Chair Mr. Adroushan Armenian at 702-580-0807 or by emailing [St.GarabedChurch@cox.net](mailto:St.GarabedChurch@cox.net))